ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հոկտեմբերի 2022 թվականի N 1609 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱ-ԿԱՆԻ ՄԱՐՏԻ 28-Ի N 275-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և 37-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի մարտի 28-ի «Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին» N 275-Ա որոշումը:

2. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության և «Սեքյուրիթի Դրիմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2013 թվականի հուլիսի 13-ին կնքված «Ոչ բնակելի տարածքի անհատույց օգտագործման» թիվ 108/0013 պայմանագիրը 2022 թվականի հոկտեմբերի 20-ից համարվում է դադարեցված:

3. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի

նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 1-օրյա ժամկետում «Սեքյուրիթի Դրիմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ծանուցել 2013 թվականի հուլիսի 13-ին կնքված «Ոչ բնակելի տարածքի անհատույց օգտագործման» թիվ 108/0013 պայմանագիրը 2022 թվականի հոկտեմբերի 20-ից դադարելու և Երևան քաղաքի Զաքարիա Քանաքեռցու 74 հասցեում գտնվող անշարժ գույքի հանձնման-ընդունման աշխատանքները համատեղ իրականացնելու մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

18.10.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ